# ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Իկիլիկյան Արթուր Արայի

### Ինքնիշխանությունը որպես պետաիրավական ինստիտուտ (պատմատեսական վերլուծություն)

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

**Երևան - 2016**

---

# РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

## Икиликян Артур Араевич

### Суверенитет как государственно-правовой институт (историко-теоретический анализ)

## АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 -"Теория и история государства и права, история государственных и правовых учений"

**Ереван - 2016**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում**

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Գ.Մ. Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 25-ին, ժամը $11^{00}$-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. մայիսի 24-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանության գիտությունների թեկնածու Ջ.Հ. Հայրապետյան**

---

**Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА**

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р.Г. Петросян**
кандидат юридических наук **Г.М. Григорян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 25 июня 2016г. в $11^{00}$ часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г.Ереван, 0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 24 мая 2016г.

**Ученый секретарь специализированного совета кандидат юридических наук Дж.А. Айрапетян**

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի հետազոտության արդիականությունը:** Ժամանակակից քաղաքական, տնտեսական, իրավական և մշակութային գլոբալացման պայմաններում առավել սրությամբ է դրվում պետական ինքնիշխանության հարցը՝ թե գիտական-տեսական և թե գործնական-կիրառական առումով:

Ինքնիշխանությունը որպես պետաիրավական և իրավունքի ընդհանուր տեսության կատեգորիա, միշտ եղել և մնում է իրավագիտության բարդ ու վիճահարույց հիմնախնդիրներից մեկը:

Ինքնիշխանության թեման շատ կենսահույզ է, քանզի մեծ է նրա գործնական նշանակությունը թե՛ ներպետական և թե՛ միջազգային հարաբերությունների պրակտիկայում: Մանավանդ, որ վերջին ժամանակներս մասնագիտական գրականության մեջ և քաղաքական-հրապարակախոսական նյութերում զգալի մաս է կազմում այն մտայնությունը, թե իբր ինքնիշխանությունը «հնացած», «իր դարն ապրած» կատեգորիա է և պետք է հանձնվի արխիվ կամ հիմնովին վերանայված լինի, թե անհրաժեշտ է լիովին կամ մասնակիորեն հրաժարվել ինքնիշխանությունից՝ որպես գլոբալացման պայմաններում տնտեսական ու քաղաքական հիմնահարցերի լուծմանը «խանգարող» հանգամանք: Իբր ինքնիշխանությունը խանգարում է խաղաղության հաստատմանը, ատոմային զենքի արտադրության նկատմամբ վերահսկողության հաստատմանը, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և այլն:

Ինքնիշխանության «մահացման» վերաբերյալ խոսակցությունների իսկական իմաստը բացահայտվում է շնորհիվ պետությունների այն պրակտիկայի, որի համար դրանք պետք է ծառայեն որպես «արդարացում» և «տեսական հիմնավորում»:

Ինքնիշխանության հակառակորդները վկայակոչում են այն հանգամանքը, որ ինքնիշխանությունը պատմական կատեգորիա է, որն առաջացել է որոշակի պայմաններում, ուստի և չի կարող

հավակնել բացարձակ իրավահասկացողության: Հակառակը, գտնում ենք, որ ինքնիշխանությունը կարող է, պետք է խաղա իսկապես դրական դեր է խաղում հանուն առաջադիմության ու ժողովրդավարության հաստատման գործում:

Ինքնիշխանության հակառակորդները նշում են, որ ինքնիշխանության (կամ ինչպես պնդում են՝ բացարձակ ինքնիշխանության) և 17-18-րդ դարերի բացարձակ միապետության միջև կա պատմական կապ, և այստեղից հանգում են այն եզրակացության, թե ինքնիշխանությունը կիրառելի չէ 20 և 21-րդ դարերի համար միանգամայն այլ պայմաններում: Իրականում ինքնիշխանության կատեգորիայի բովանդակությունը զարգացել և հարմարվել է պատմականորեն փոփոխվող սոցիալ-քաղաքական պայմաններին: Պատմականորեն ինքնիշխանության կատեգորիան առաջացել է բացարձակ միապետության զարգացման հետևանքով (ի դեպ, վերջինս որոշակի փուլում եղել է ավելի առաջադիմական, քան իրեն նախորդած ավատական մասնատվածությունը): Սակայն շուտով հանդես գալով ժողովրդական ինքնիշխանության ձևով, արդեն ուղղված էր բացարձակ միապետության դեմ: Սոցիալ-դեմոկրատիան, ձգտելով իշխանության, ընդունեց ինքնիշխանության սկզբունքը անտեսելով նրա միապետական ծագումը և նրան տալով նոր բովանդակություն և ձևեր:

Ինքնիշխանության հակառակորդները ինքնիշխանությունը վերացնելու իրենց ձգտումը հաճախ քողարկում են «բացարձակ» ինքնիշխանության դեմ ուղղված հիմնավորումներով: Սակայն բացարձակ ինքնիշխանություն երբեք չի եղել և չէր էլ կարող լինել: Դա մետաֆիզիկական կարգի կատեգորիա է կամ երևակայության արդյունք: Միշտ էլ գոյություն են ունեցել ինքնիշխանության սահմաններ, որոնք պայմանավորված են եղել տնտեսական պայմաններով, պետությունների միջազգային հաղորդակցման զարգացությամբ և պատմական դարաշրջանի քաղաքական պահանջներով: Այդ սահմանները փոփոխվել և փոխվում են այդ բոլոր գործոնների փոփոխման համեմատ:

Ինքնիշխանության կատեգորիան երբևիցէ չի մերժել կամ մերժում այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ մեծամասնության սկզբունքը, որի կիրառումը միջազգային կազմակերպությունում անխուսափելի է, չի ժխտում միջազգային արդարադատության և պետությունների միջև տնտեսական համագործակցության զարգացումները, ատոմային զենքի արտադրության նկատմամբ միջազգային վերահսկողության անհրաժեշտությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ազգային ինքնիշխանության համար մղվող պայքարը հանուն ժողովրդավարության ու միջազգային խաղաղության մղվող պայքարի բաղադրամասն է:

Հանուն ազգային անկախության, պետական ինքնիշխանության համար մղվող պայքարը արդի պայմաններում անքակտելիորեն կապված է ժողովրդավարական պետական իշխանության համար մղվող պայքարի հետ: Ժողովուրդների հենց այդ պայքարում են դրսևորվում արդի պատմական ժամանակաշրջանում ինքնիշխանության ունեցած դրական իմաստն ու առաջադիմական նշանակությունը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը**: Պետական ինքնիշխանության հիմնախնդրի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ, ըստ էության, ուսումնասիրված չէ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքում արծածված է ընդամենը մի քանի էջերում[1]:

Պետական ինքնիշխանության հիմնախնդիրն առավել խորությամբ ուսումնասիրված է խորհրդային և հետխորհրդային ռուսական իրավագիտության մեջ, մասնավորապես՝ Ի.Դ. Լևինի, Ս.Ա. Ավագյանի, Մ.Վ. Բագլայի, Ն.Ի.

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. Ն.Ա. Այվազյան: Երևան, 2008, էջ 116-119:

Գրաչևի, Ա.Լ. Բրեդիխինի աշխատություններում[2]: Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքը էականորեն տարբերվում է վերոնշված աշխատություններից նրանով (բնավ չնսեմացնելով նշված աշխատությունների գիտական նշանակությունը), որ իրավունքի համընդհանուր տեսության դիրքերից, համակարգված վերլուծության է ենթարկվել պետական ինքնիշխանության հիմնախնդրի հետ կապված պատմական, իմացաբանական և իրավաբանական ասպեկտները:

Սույն ատենախոսական աշխատանքը կոչված է մասամբ լրացնել ու հայրենական իրավագիտության մեջ առկա բացը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան**. Հետազոտության **օբյեկտը** պետական ինքնիշխանության ինստիտուտն է և նրա ժամանակակից ընկալումը:

Հետազոտության **առարկան**՝ պետական ինքնաիշխանության պատմական զարգացման հիմնական ուղենիշներն են, նրա ժամանակակից էությունը և բովանդակությունն է:

**Հետազոտության նպատակը և խնդիրները**. Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրել պետական ինքնիշխանության կատեգորայի հետ կապված պատմական, տեսական և մեթոդաբանական կիրառական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է:

Նշված նպատակին հետամուտ լինելով՝ հեղինակը փորձել է լուծել հետևյալ **խնդիրները.**

– բացահայտել պետական ինքնիշխանության հայեցակարգի հետկապված պատմատեսական հիմնախնդիրները,

– լուսաբանել պետական ինքնիշխանության ժամանակակից ընկալումը և դրաէությունը,

– վերլուծել պետական ինքնիշխանության հիմնական հատկանիշները,

– ներկայացնել պետական ինքնիշխանության, միջազգային

[2] Հետխորհրդային շրջանի աշխատություններից, օրինակ, տե՛ս **Грачев Н.И**. Государственные устройство и суверенитет в современном мире: вопросы теории и практики. Дисс… док. юрид. наук. Волгоград. 2009; **Бредихин А.Л.** Суверенитет как политико-правовой феномен. М., 2012 և այլն:

իրավունքի և վերպետականության փոխհարաբերակցության հիմնական կողմերը,

– վերլուծության ենթարկել պետական ինքնիշխանության և ազգային ինքիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները:

**Գիտական նորույթը**. Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ հեղինակը վեր է հանել պետական ինքնիշխանության հետկապված պատմատեսական և ժամանակակից պետահրավական հարցադրումները, դրանց համարժեք լուծումների համար մշակել է գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք ունեն զգալի տեսական-իրավական և պրակտիկ քաղաքականության ոլորտում գործնական-կիրառական նշանակություն:

Բացի դրանից, հեղինակը չի սահմանափակվել միայն հիմնախնդիրների տեսական վերլուծություններով և համապատասխան ընդհանրացումներով, այլև հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկում է ինքնիշխանության «ճկուն և հարաշարժ» հեղինակային կոնցեպցիան, որի միջոցով մի կողմից՝ կարելի է ամրապնդել ազգային-պետական ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ հնարավորություն է ընձեռում առավել ճկուն և նպատակասլաց քաղաքականություն իրականացնել միջազգային և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում: Այդպիսի տեսական, գործնական և մեթոդաբանական համալիր ուղղվածությունը ատենախոսական աշխատանքի առարկայական բովանդակությունն է կազմում:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները**. Ելնելով ատենախոսության հիմնական նպատակից և դրանից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Ինքնիշխանությունը պետության, ազգի և անձի որպես սոցիալական երևույթների կենսագոյության էական բնութագրիչներից է: Ինքնիշխանությունը կրող

սուբյեկտները օժտված լինելով կամքի (պետական, ժողովրդական (ազգային) և անձնային ազատությամբ՝ իրենց իրավունքների սահմաններում ինքնուրույն որոշում են իրենց կեցության կարգավիճակը՝ ձևական (իրավաբանական) հավասարության պայմաններում:

2. Պետական ինքնիշխանությունն առավել բարձր պետաիրավական կատեգորիա է, քանի որ ինքնիշխան պետության առկայության դեպքում է, որ լիարժեքորեն օգտագործվում է ազգի և անձի ինքնիշխանությունը վերջիններիս ինքնիշխանությունը գտնում է պետության երաշխավորված պաշտպանության ներքո:

3. Աշխատանքում հեղինակը վիճարկում է այն տարածված տեսակետը, թե իբր պետական ինքնիշխանության հայեցակարգի հիմնադիրը ֆրանսիացի իրավաբան Ժան Բոդենն է (XVIդ.): Ժան Բոդենը զարգացրել է ինքնիշխանության հասկացության իրավաքաղաքական բովանդակությունը, սակայն սույն աշխատանքի հեղինակը հանգել է այն տեսակետին, որ իրավագիտության մեջ պետական ինքնիշխանության առաջին սահմանումը, որը հեռու չէ արդի գիտական սահմանումից, մշակել է XII դարի հայ մեծանուն օրենսգետև օրենսդիր Մխիթար Գոշը՝ իր «Հայոց Դատաստանագրքում» (1184թ.): Գոշը ինքնիշխանության կարևոր հատկանիշներ է համարում պետության գերակայությունը հպատակ ժողովրդի և տարածքի նկատմամբ և անկախությունը՝ արտաքին հարաբերություններում:

4. Հասարակությունում և միջազգային հարաբերություններում պետական ինքնիշխանությունը մարմնավորում է պետական իշխանության մարմինների իրավաբանական և սոցիալական լեգիտիմությունը՝ այսինքն ժողովրդի որպես իշխանության աղբյուրի, անունից լուծելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության հետ առնչվող ցանկացած հարց:

5. Իրավաբանական առումով՝ պետական ինքնիշխանությունը

բացարձակ և անսահմանափակ չէ: Երկրի ներսում օժտված լինելով տարածքային գերակայությամբ, ինքնիշխանությունը սահմանափակվում է իրավունքի գերակայությամբ, իսկ արտաքին հարաբերություններում՝ օժտված լինելով անկախությամբ և ինքնուրույնությամբ, այդուհանդերձ ինքնիշխանությունը սահմանափակվում է պետության կողմից վավերացած միջազգային պայմանագրերով, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով:

6. Սոցիալական առումով՝ ինքնիշխանությունը սոցիալական գոյի այնպիսի վիճակ է, որը բնորոշվում է՝ ճկունությամբ, հարաշարժությամբ և փոփոխականությամբ, որոնք սակայն չեն ստվերում ինքնիշխանության օբյեկտիվ հիմնարար իրավական-քաղաքական հատկանիշները՝ տարածքային գերակայությունը, անկախությունը և ինքնուրույնությունը:

7. Ինքնիշխանությունը ոչ թե պետական իշխանության, այլ պետության օրգանական հատկանիշն է, այսինքն այն ծագում է պետության հետ և վերանում պետության հետ միասին: Միայն ինքնիշխան պետություններն են օժտված լրիվ իրավասուբյեկտությամբ, այսինքն՝ ազատ և ինքնուրույն որոշելու պետական կառուցվածքի ձևը, կառավարման ձևը, քաղաքական վարչակարգը, սոցիալ-տնտեսական կարգը և արտաքին քաղաքականության հարցերը:

8. Ինքնիշխանությունը՝ ձևի ու բովանդակության փիլիսոփայական կատեգորիայի տեսանկյունից, ունի երկու փոխկապված բաղադրիչներ՝ քաղաքական և իրավաբանական: Ինքնիշխանության բովանդակությունը՝ նրա քաղաքական կողմն է կամ քաղաքական ինքնիշխանությունն է, իսկ ինքնիշխանության ձևը՝ նրա իրավաբանական էությունն է կամ իրավաբանական ինքնիշխանությունը: Դրանք մեկուսի գոյություն ունենալ չեն կարող և կազմում են մեկ միասնական ամբողջական կատեգորիա՝ պետական ինքնիշխանություն:

**Հետազոտության տեսական հենքը և մեթոդաբանական հիմունքները.**

Ատենախոսության համար՝ որպես տեսական հենք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների գիտական հետազոտությունները: Այս առումով՝ հեղինակն ուսումնասիրել և վերլուծել է հայ իրավաբան գիտնականների Ն.Ա. Այվազյանի, Ն.Ա. Ապիյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ռ.Գ. Պետրոսյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Գ.Հ. Սաֆարյանի և մյուս հեղինակների աշխատությունները:

Հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել խորհրդային և հետխորհրդային շրջանի ռուս գիտնականների, մասնավորապես՝ Ս.Ա. Ավագյանի, Ա.Ա. Ալեքսևեի, Յու.Ա. Դենիսովի, Ա.Բ. Վենգերովի, Ի.Դ. Լևինի, Վ.Ա. Տումանովի, Վ.Ս. Ներսեսյանցի, Բ.Ն. Տոպորնինի, Վ.Ն. Խրոպանյուկի, Վ.Վ. Լազարևի, Օ.Է. Լեյստի, Ա.Լ. Բրեդիհինի, Ն.Ի. Գրաչևի և այլոց աշխատություններին:

Հեղինակը կիրառել է հետազոտության տարբեր գիտական մեթոդներ՝ այդ թվում՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, ձևական տրամաբության եղանակներն ու միջոցները, համեմատական-իրավաբանական և ձևական իրավաբանական վերլուծության, պատմական-համեմատական մեթոդները:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը.** Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական փոփոխությունների, ինչպես նաև տարածաշրջանի իրավաքաղաքական իրադարձությունների համատեքստում առավել կարևորվում է պետական ինքնիշխանության ամրապնդումը: Այս առումով ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ գիտական հետազոտության առարկա են դարձել ինքնիշխանության տեսական և կիրառական հիմնախնդիրները՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից և կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրողների համար:

Գործնական առումով հետազոտության արդյունքները և նյութերը կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն», «Սահմանադրական իրավունք» և «Միջազգային

իրավունք» դասընթացների ուսումնառության ժամանակ:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունը.** Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Ատենախոսությունը իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի պետահրավական հետազոտությունների բաժնում, որտեղ քննարկվել և գրախոսվել է աշխատանքը:

**Աշխատանքի կառուցվածքը.** Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է՝ ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

**Աշխատանքի համառոտբովանդակությունը**

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի գիտատեսական և գործնական-կիրառական նշանակությունը:

**Աշխատանքի առաջին գլուխը՝ «Ինքնիշխանության ինստիտուտի տեսական-մեթոդաբանական ասպեկտների վերլուծություն»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Ինքնիշխանության հասկացությունը և էությունը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է ինքնիշխանության հասկացությունը և էությունը:

Ընդհանրապես՝ ինքնիշխանությունը սոցիալական որևէ երևույթի (գոյի) ինքնությունը, ինքնատիպությունը, անկախությունն է որևէ այլ գոյից:

Սոցիալական իրականության մեջ ինքնիշխանության սուբյեկտներն են՝ անձը, ազգը (ժողովուրդը) և պետությունը: Անձի ինքնիշխանությունը նրա կամքի ազատությունն ու

ինքնուրույնությունն է այլ սուբյեկտներից՝ սոցիալական նորմատիվ կարգավորիչների համակարգում:

Ժողովրդի (ազգի) ինքնիշխանությունն ազգի օրգանական իրավաքաղաքական հատկությունն է, նրա անբաժան, անօտարելի և բնական իրավունքն է:

Պետական ինքնիշխանությունը տարածքային գերակայությունն է և ինքնավարությունն ու ինքնուրույնությունը արտաքին հարաբերություններում: Սակայն պետական ինքնիշխանությունը բացարձակ ու անսահմանափակ չէ, այն սահմանափակվում է Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով:

**Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ինքնիշխանության սկզբունքները և հատկանիշները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն ներկայացնում է ինքնիշխանության սկզբունքների բովանդակությունը և հիմնական հատկանիշները:

Ըստ հեղինակի ինքնիշխանության սկզբունքներն են՝ գերակայությունը, անկախությունը, ինքնուրույնությունը, անընդհատությունը, անբաժանությունը, իրավականությունը:

Պետական ինքնիշխանության սկզբունքների հետ սերտորեն փոխկապված են նրա բնութագրական հատկանիշները, որոնք հանգամանորեն ներկայացված են ատենախոսական աշխատանքի մեջ:

**Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Պետական իշխանության և պետական ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկում է երկու հարակից և միաժամանակ տարբեր պետաիրավական ինստիտուտների՝ պետական իշխանության և պետական ինքնիշխանության հարաբերակցության ու առնչակցության հետկապված հարցերը:

**Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Ինքնիշխանության ինստիտուտի պատմական զարգացումը»** վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

**Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Ինքիշխանության ինստիտուտի ձևավորումը և զարգացումը Հին և Միջին դարերում»** վերտառությամբ, հեղինակը պատմական, իրավաբանական աղբյուրների վերլուծության արդյունքների հիման վրա եզրակացնում է, որ իրավաքաղաքական ուսմունքների պատմության մեջ առաջիններից մեկը՝ միջնադարյան հայ օրենսգետ և օրենսդիր Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքում» ամրագրել է պետական ինքիշխանության հասկացությունը՝ միջնադարյան հայեցողության սահմաններում:

Մասնավորապես, Գոշը ինքիշխանության կարևոր հատկանիշ է համարում պետական իշխանության (թագավորական իշխանության) գերակայությունը հայրենյաց տարածքի և բնակչության վրա, անկախությունը՝ արտաքին հարաբերություններում (թագավորը ուրիշ ժողովուրդներից հարկ է վերցնում կամ համենայնդեպս՝ հարկատու չի այլոց): Ըստ էության, սա պետական ինքիշխանության ժամանակակից գիտական սահմանումից այնքան էլ հեռու չէ:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ինքնիշխանության հայեցակարգի զարգացումը Նոր և Նորագույն ժամանակաշրջանում»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն ներկայացնում է ինքնիշխանության վերաբերյալ մոտեցումների, հայացքների և հայեցակարգերի էվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունները և դրա գործնական նշանակությունը ժամանակակից ինքնիշխան պետությունների գործնական քաղաքականության մեջ և միջազգային իրավական հարաբերություններում:

**Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Ինքնիշխանության հիմնահարցը գլոբալացման պայմաններում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

**Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Գլոբալացումը որպես արդի դարաշրջանի օբյեկտիվ գործընթաց»** վերնագրով, հեղինակը բնութագրում է տնտեսական, քաղաքական, իրավական,

մշակութային գլոբալացումը համամարդկային և տարածաշրջանային մակարդակներում, որպես արդի մարտահրավերների օբյեկտիվ և համարժեք պատասխան:

**Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Միջազգային իրավունքը, վերպետականությունը և պետական ինքնիշխանությունը»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկում է պետական ինքնիշխանության հարաբերակցությունը միջազգային կազմակերպությունների և վերպետական կառույցների հետ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների տեսանկյունից: Հեղինակը զարգացնում է այն միտքը, որ պետական ինքնիշխանությունը բոլորովին խոչընդոտչի հանդիսանում, որպեսզի միջազգային իրավունքի սահմաններում պետությունները միանան կամ միավորվեն միջազգային ունիվերսալ կամ տարածաշրջանային միջկառավարական կազմակերպություններին կամ միություններին:

**Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Պետական ինքնիշխանության և ազգային ինքիշխանության հարաբերակցության հիմնախնդիրը»** վերնագրով, հեղինակը հիմնավորում է այն մոտեցումը, որ ազգային ինքնիշխանության զարգացման բարձրագույն աստիճանը՝ ինքնորոշման իրավունքով պետականության ձեռքբերումն է և պետական ինքնիշխանության հաստատումը՝ չկորցնելով ազգային ինքնիշխանության սկզբնական և բնական էությունն ու ինքնատիպությունը:

**Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ձևակերպել է հետևյալ եզրահանգումները.**

1. Ինքնիշխանությունն իր տարածքում պետության լիիշխանության և այլ պետություններից և կազմակերպություններից նրա անկախության իրավական, քաղաքական և փաստացի վիճակն է:

2. Ինքնիշխանությունը ենթադրում է, որ պետության ձևով կազմակերպված տվյալ հասարակության մեջ պետության անունից հանդես եկող հանրային իշխանությունը իր մեջ

ներառում է հետևյալ անհրաժեշտ հատկանիշները. միասնականությունը, լիիրավությունը, անընդհատությունը, բացառիկությունը:

3. Ինքնիշխանությունը որպես իշխանակա ն պարտադրանքի մենաշնորհի պատկանելություն պետությանը՝ հանձինս նրա մարմինների, կամ դրա կենտրոնացում նրա ձեռքում: Հասարակության անդամների նկատմամբ կիրառվող իշխանական հարկադրանքը կարող է իրականացվել միայն պետության կողմից կամ պետական նպատակներով պետության կողմից համապատասխան իրավունքի շրջանակներում: Վերջին դեպքում բավարար չէ, որ պետությունը պարզապես թույլ տա կամ հավանություն տա, որ որևէ ոչ պետական կազմակերպություն իրականացնի այդ պարտադրանքը: Այս առումով, անհրաժեշտ է, որ տեղի ունենա անմիջական շնորհում, որի դեպքում ցանկացած իշխանական հարկադրանք դառնում է այնպիսի պարտադրանք, որը բխում է հենց պետական իշխանությունից, որն իր հայեցողությամբ կարող է տվյալ կազմակերպությանը զրկել նրա իշխանական գործառույթներից: Այս առումով, իշխանական հարկադրանքը ներառում է ոչ միայն իրավական հրամանի արձակում, այլև ենթակա սուբյեկտների կողմից տվյալ հրամանի կատարման ապահովում՝ օրենքով սահմանված ընթացակարգով:

4. Պետության իշխանության արտաքին անկախությունը բովանդակության առումով նշանակում է, որ պետությունն իր խնդիրները և շահերը իրականացնում է արտաքին միջամտությունից ազատ կերպով, իսկ իրավաբանական ձևի առումով դա արտահայտում է այն փաստը, որ նման ազատության համար չկան արտաքին իրավաբանական սահմանափակումներ, բացի միջազգային իրավունքի այն նորմերից, որոնք համապարտադիր են բոլոր պետությունների համար:

Որոշ հեղինակներ ինքնիշխանությունը դիտում են որպես զուտիրավաբանական կատեգորիա: Այսպես. Քելզենը հնարավոր է համարում ինքնիշխանության գոյությունը միայն իրավաբանական հարթության մեջ: Քելզենի կարծիքով փաստացի

ինքնիշխանություն չի կարող լինել, այն բացառվում է արդեն այն պատճառով, որ գործում է պատճառականության ռեալ սկզբունքի ոլորտում: Ինքնիշխանության այդպիսի զուտ ձևական հայեցակարգը հատուկ է նաև Պալենկոյին, որը պնդում է, թե «ինքնիշխանությունը միայն զուտձևական իրավաբանական հասկացություն է»: Այդ նույն տեսության մեկ այլ կողմն են, որով իրավաբանականը կտրվում է փաստացիից ու քաղաքականից, Աֆոլտերի, Հերցֆելդի և այլոց տեսությունները, որոնցով շեշտվում է ինքնիշխանության ամենևին էլ ոչ իրավաբանական, այլ զուտքաղաքական բնույթը:

Հեղինակի կարծիքով, ինքնիշխանությունը իրավականի և փաստացիի անխզելի միասնության և ամբողջության մեջ է:

5. Հեղինակի կարծիքով իրավաբանականի ու փաստացիի հակադրումը կարիք ունի լրացուցիչ հիմնավորման:

Իրավաբանականը միշտ էլ որպես իր բաղադրատարր ներառում է փաստացին: Իրավասուբյեկտությունը որպես իր գոյության նախադրյալ միշտ ունի իրավունքի սուբյեկտի առկայության կամ գոյության փաստը: Միջազգային իրավունքի ոլորտում այդ նախադրյալն արտահայտվում է արդյունավետության սկզբունքի միջոցով, ըստորի ինքնիշխանության անհրաժեշտ հատկանիշն է պետության կողմից իր տարածքում սեփական գործառույթների արդյունավետկատարումը: Էլ ավելի մեծ չափով դավերաբերում է սահմանադրական իրավունքին, որովհետև այս դեպքում որոշակի փաստը արդյունավետ պետական կազմակերպության առկայությունը, պայման է ոչ միայն պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքի համար, այլև՝ տվյալ պետության մեջ գոյություն ունեցող օբյեկտիվ իրավունքի համար, քանի որ միայն պետական պարտադրանքի արդյունավետության շնորհիվ է այդ իրավունքը իրավունք դառնում: Պետության գործառույթների իրականացման արտաքին չափանիշն է հանրային իշխանության գործող մեխանիզմի առկայությունը:

6. Պետության լիիշխանությունն ու անկախությունը

դրսևորվում են պետության կողմից իր գործառույթների կատարման ժամանակ և այդ պատճառով ենթադրում են տվյալ գործառույթների իրականացումը իրավաբանորեն ապահովող համապատասխան ինքնիշխանական իրավունքների առկայություն: Դրանց թվին են դասվում այնպիսի իրավունքները, ինչպիսիք են իշխանության մարմինների ստեղծման իրավունքը, արտաքին հարաբերությունների վարման իրավունքը, օրենսդրությամբ զբաղվելու իրավունքը, արդարադատություն իրականացնելու իրավունքը, իր տարածքում կարգուկանոն պահպանելու իրավունքը և այլն: Սակայն այդ իրավունքների առկայությունը, լինելով ինքնիշխանության անհրաժեշտ պայման, ինքնին դեռ բավարար չէ ինքնիշխանության ստեղծման համար: Ինքնիշխան պետություններին առանձնահատուկ է, առաջին հերթին, այդ իրավունքների լրիվությունը և բացառիկությունը: Ոչ ինքնիշխան պետությունները, որպես կանոն, օժտված չեն լինում բոլոր պետական իրավունքներով և զրկված են լինում դրանց մի մասից, օրինակ՝ արտաքին հարաբերությունների իրավունքից կամ ինքնուրույն պատերազմող կողմ դիտվելու իրավունքից: Սակայն ինքնիշխանության հիմնական էական բնութագիրն են՝ լիիշխանությունը և այդ իրավունքների իրացման անկախությունը:

7. Սոցիալական իրականության մեջ իրարից տարբերվում են ինքնիշխանության երկու հիմնարար ոլորտներ /տեսակներ/՝ ա) ազգային /կամ ժողովրդական/ ինքնիշխանությունն ազգի առաջնային, բնական և բացարձակ հատկությունն է, և չեն կարող երբևիցե լինել ազգային ինքնիշխանությունից զուրկ ազգեր, մինչդեռ եղել են, կան ու կլինեն պետականությունից ու, հետևաբար նաև պետական ինքնիշխանությունից զուրկ ազգեր: Ազգերը և ազգությունները առանց պետականության շարունակում են գոյատևել: Մինչդեռ նույնիսկ տեսականորեն անհնարին է պատկերացնել որևէ ազգի կամ ազգության գոյություն առանց ինքնիշխանության կամ դրա իրականացման

համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրների լուծման նախանձախնդրություններ:

8. Պետական ինքնիշխանության սահմանափակ բնույթը պայմանավորված է ոչ միայն ազգային ինքնիշխանության նկատմամբ նրա ստորադաս, ծառայական դերով, այլև պետությունների միջազգային համայնքի գոյությամբ, որի անդամ-պետությունները, անվերապահորեն ընդունելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի և սկզբունքների գերապատվությունն իրենց ներպետական օրենսդրության նկատմամբ, դրանով իսկ կամովին որոշակիորեն սահմանափակում են իրենց ինքնիշխանությունը:

Պետական ինքնիշխանության սահմանափակ բնույթը բխում է նաև պետության էությունից: Սոցիալ-իրավական պետականությունների համար, պետական ինքնիշխանությունը և պետական իշխանությունը սահմանափակվում են իրավունքով և մարդու իրավունքների գործողությամբ:

**Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Պետական իշխանության և պետական ինքնիշխանության հարաբերակցությունը և դրանց իրավաբանական բնույթը //«Օրինականություն», Երևան, N 70, 2012, էջ 52-55:

2. Պետական ինքնիշխանության ժամանակակից հայեցակարգի շուրջ //«Օրինականություն», Երևան, N 73, 2012, էջ 55-59:

3. Ինքնիշխանության հասկացությունը և էությունը //«Օրինականություն», Երևան, N 74, 2012, էջ 45-50:

4. Պետական ինքնիշխանության հատկանիշները //«Օրինականություն», Երևան, N 81, 2014, էջ 46-51:

5. Պետական ինքնիշխանության և ազգային ինքնիշխանության հարաբերակցության հիմնահարցերը //«Օրինականություն», Երևան, N 83, 2014, էջ 38-43:

6. Պետական ինքնիշխանության տեսական և մեթոդաբանական ասպեկտները: Մենագրություն: Երևան, 2016, 108 էջ:

**Икиликян Артур Араевич**

# Суверенитет как государственно-правовой институт (историко-теоретический анализ)

**Резюме**

Настоящая диссертационная работа посвящена всестороннему изучению проблем, связанных с суверенной властью.

Суверенитет как категория общей теории государства и права всегда была и остается одной из сложных и спорных проблем правоведения.

Тема суверенитета очень животрепещущая, поскольку велико ее практическое значение и в практике внутригосударственных, и в практике международных отношений. Так в последнее время в профессиональной литературе и политико-публицистических материалах значительное место занимают рассуждения, что суверенитет - это “устаревшая”, “пережившая свой век” категория и должна быть передана в архив или быть полностью пересмотрена; что необходимо полностью и частично отказаться от суверенитета как “мешающего” обстоятельства при решении экономических и политических проблем в условиях глобализации; что необходимо отказаться от “безумия” суверенитета.

Противники суверенитета апеллируют к обстоятельству, что суверенитет - это историческая категория, возникшая в определенных условиях, следовательно она не может претендовать на абсолютное правопонятие. Автор считает, что суверенитет может, должен играть и действительно играет положительную роль во имя прогресса и утверждения демократии.

Научная новизна диссертационной работы, в том, что впервые в отечественном правоведении автор поднял историко-теоретические и современные государственно-теоретические проблемы, связанные с государственным суверенитетом, для их адекватного решения разработал научно обоснованные предложения, имеющие большое практическое значение в сфере теоретико-правовой и практической политики.

Помимо этого, автор не ограничился лишь теоретическим анализом проблем и соответствующими обобщениями, а на основе результатов исследования предложил авторскую “гибкую и подвижную” концепцию суверенитета, посредством которой с одной стороны, можно укрепить национально-государственный суверенитет, с другой стороны - получает возможность осуществить более гибкую

и целенаправленную политику в международных и региональных интеграционных процессах. Такая комплексная теоретическая, практическая и методологическая направленность составляет предметное содержание диссертационной работы.

Суверенитет - это одна из существенных характеристик жизненности государства, нации и личности как социальных явлений. Наделенные суверенитетом субъекты, обладающие свободой воли (государственной, народной (национальной) и личной) в рамках своих прав самостоятельно определяют статус своего бытия в условиях формального (юридического) равенства.

Государственный суверенитет - это наивысшая государственно-правовая категория, поскольку при наличии суверенного государства полноценно используется суверенитет нации и личности, последние суверенитет находят при гарантированной защите государства.

В работе автор оспаривает распространенную точку зрения, что якобы основателем концепции государственного суверенитета является французский юрист Жан Боден (XVI в.). Жан Боден развил политико-правовое содержание понятия суверенитета, однако первое определение государственного суверенитета в правоведении, которое недалеко от определения современной науки, разработал крупный армянский законовед и законодатель XII века Мхитар Гош в своем “Армянском Судебнике” (1184 г.). Гош важным свойством суверенитета считает верховенство государства над подчиненным народом.

В теоретическом и практическом плане результаты и материалы исследования могут использоваться в процессе правотворческой деятельности, а также при изучении курсов “Государство и теория права”, “Конституционное право” и “Международное право” и других спецкурсов.

**Artur Ara Ikilikyan**

# Sovereignty as a state-legal institute (historical and theoretical analysis)

**Summary**

This thesis is devoted to a comprehensive study of the problems associated with sovereign power.

Sovereignty as a category of the general theory of law has always been and remains one of the most difficult and controversial issues of jurisprudence. The subject of sovereignty is really a burning one because of its great practical value in the practice of domestic and international relations.

In particular, that in recent years a significant place in the professional literature and the political and journalistic materials is occupied by the arguments that sovereignty is an "old", "gone through his life" category and should be transferred to the archive or to be completely revised, sovereignty must be fully and partially renounced as "disturbing" circumstances in solving the economic and political problems in the context of globalization, it is necessary to abandon the "madness" of sovereignty. If sovereignty prevents the establishment of peace, the establishment of control over the production of atomic weapons, the effective protection of human rights, and others.

The opponents of sovereignty appeal to the fact that sovereignty is a historical category that emerged in certain circumstances, therefore, it cannot claim to absolute right concept. On the contrary, we believe that sovereignty may have to play and does play a positive role in the name of progress and democracy.

The scientific novelty of the thesis is that for the first time in domestic jurisprudence the author raised the historical and theoretical and modem state-theoretical issues related to national sovereignty, for their adequate solutions he has developed scientifically justified proposals, which are of great practical importance in the field of theoretical and legal and practical policy.

In addition, the author is not limited only to the theoretical analysis of the problems and the corresponding generalizations, and on the basis of research results he offers the his "flexible and mobile" concept of sovereignty, by means of

which on the one hand, we can strengthen national sovereignty, on the other hand - it is able to carry out more flexible and targeted policies in international and regional integration processes. Such a complex theoretical, practical and methodological orientation is of the substantive content of the thesis.

Sovereignty is one of the essential characteristics of the vitality of state, nation and individual as social phenomena. Subjects possessing free will (the state, the people's (national) and private) endowed with sovereignty within its right to determine the status of their being in a formal (legal) equality.

State sovereignty is the highest state-legal category, since in the presence of a sovereign state the sovereignty of the nation and the individual is fully used, the latter's sovereignty is guaranteed under the protection of the state.

In the paper, the author challenges the common view that the alleged founder of the concept of state sovereignty is a French jurist Jean Bodin (16$^{th}$ century.). Jean Bodin developed political and legal content of the concept of sovereignty, however, the first definition of state sovereignty in the jurisprudence that is. close to the definition of modem science, developed by the largest Armenian lawyer and legislator of 12$^{th}$ century Mkhitar Gosh in his "Armenian Code of Law" (1184). Ghosh believes that important property of sovereignty is supremacy of the state over the subordinate people.

In theoretical and practical terms the results and research materials may be used during the law-making process, as well as in "State and Theory of Law", "Constitutional Law" and "International law" study courses.